

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂԿՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

« Գեղարքունիքի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովը իր գործունեությունը իրականացնելիս առաջնորդվում է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց մասին կոնվեցիայի դրույթներով, « օրենքներով և « Կառավարության որոշմներով: « Գեղարքունիքի մարզային հանձնաժողովը, գործընկեր կազմակերպությունների և ՀԿ-ների միջոցով 2015 թվականի ընթացքում իրականացրել է բազմաթիվ միջոցառումներ:

1. Հաշմանդամների շահերի պաշտպանության, կարողությունների զարգացման թեմաներով կազմակերպվել է տարաբնույթ սեմինարներ մարզի սոցիալական ոլորտում գործող ՀԿ-ների համար: Հանրային քննարկումներ է իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և այլ թեմաներով մարզում գործող 3 հեռուստաընկերություններով /Քյավառ, Զանգակ, Սևան/:
2. Հաշմանդամների իրավունքների ոտնահարման դեպքերը բացահայտելու նպատակով ստեղծվել է թեժ գիծ /0264-2-38-75/:
3. Մարզային հանձնաժողովի նախաձեռնությամբ 80 մանկուց հաշմանդամի, Գավառի N 1 հատուկ դպրոցի և մանկատան սաների տրամադրվել են նվերներ Ամանորի և Սուրբ ծննդյան տոների առթիվ, որին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ««Կորլո Վիժն Ինթերնեյշնլ»»-ի Գավառի զարգացման ծրագիրը:
4. Համագործակցելով « Լճխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ հաշմանդամներին ապահովել ենք հաշմանդամության պարագաներով՝ սայլակներ, ձեռնափայտեր և այլն: Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում աշխատանքի են ընդունվել հաշմանդամություն ունեցող 2 անձինք:
5. Մարզի 17150 հաշմանդամներից՝ շուրջ 370 հաշմանդամություն ունեցող անձանց « Գեղարքունիքի մարզպետի կողմից տրամադրվել է ֆինանսական աջակցություն, իսկ 119-ին՝ հատկացվել է առողջարանի և հանգստյան տան ուղեգրեր՝ 11 մանկուց հաշմանդամ երեխաների, ծնողների հետ միասին հատկացվել են Ջերմուկ առողջարանի ուղեգրեր: Մարզի հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքների 6-13 տարեկան երեխաների համար « Կառավարության՝ դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ծրագրով 292 երեխաներ մեկնել են «,Հանքավանի,, «,Հասմիկ,, ճամբար, որոնցից 38-ը հաշմանդամություն ունեցող ընտանիքների երեխաներ էին: 2015 թվականին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից կազմակերպված Ստեփանավանի ամառային ճամբարում մեր մարզից հանգստացել են 23 երեխաներ:
Ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող 30 երեխաներ ուղղորդվել են Երևանում և Գավառում գործող բուժ. վերականգնողական կենտրոններ:
6. Մարզում մեծ ուշադրություն է դարձվում թեքահարթակների կառուցմանը: Հանձնաժողովի նախաձեռնությամբ 2015 թվականին մարզի 11

կազմակերպությունների շքանուարքերում կառուցվել են թեքահարթակներ, իսկ վերանորոգվող կամ նոր կառուցվող շինություններում, օրինակ՝ Գավառ քաղաքի նոր կառուցվող թատրոնի շենքի նախագծային փաստաթղթերում նախատեսված է կառուցել թեքահարթակներ և հարամարեցված սան հանգույցներ:

7. Մարզպետարանի միջնորդությամբ ՀՀ ՊՆ-ը մարզի 4 հաշմանդամ ընտանիքի ֆինանսական աջակցություն է տրամադրել բնակարան ձեռք բերելու նպատակով:
8. Մարզային հանձնաժողովը սերտորեն համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող մարզային և հանրապետական ՀԿ-ների հետ, որոնք մարզում իրականացնում են զանազան ծրագրեր:
9. Գավառ քաղաքում գործում է “Արաբկիր” բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի Գավառի „Երեխայի զարգացման և վերականգնման կենտրոն,, ՀԿ-ն , նա սպասարկում է մարզի խնդիրներ ունեցող երեխաներին:
Գավառի “Բարի Հույս” սոցիալապես հաշմանդամ երեխաների առողջությանն աջակցող ՀԿ-ն ուսումնասիրում և հայտնաբերում է մարզի հատուկ կարիքներով 0-18 տարեկան երեխաների և ուղղորդում համապատասխան հաստատություններ:
10. Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 6-ում իրականացվում են ներառական կրթություն(Գավառի N 1 հիմնական, Ճամբարակի N 1 հիմնական, Վարդենիսի N 2 հիմնական, Սևանի N3 հիմնական, Մարտունի քաղաքի N 2 հիմնական և Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցներում, որտեղ սովորում են 107 երեխաներ):
Նշված բոլոր դպրոցներում լուծված է երեխաների սննդի և տրանսպորտային խնդիրները, առկա են թեքահարթակներ:
Դպրոցների ֆինանսական գործունեությունը ապահովվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:
11. 2015 թվականի հոկտեմբերին Ծաղկաձորում անցկացվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի եզրափակիչ փուլի մրցումներ: ՀՀ Գեղարքունիքի մարզի 20 հաշմանդամ մարզիկներ մասնակցել են առաջնությանը. թիմային հաշվարկով մարզը գրավել է երրորդ մրցանակային տեղ:
12. Գավառի N 1 հատուկ դպրոցը իր տեսակի մեջ մարզի միակ կրթական հաստատությունն է, որը իրականացնում է հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների ուսուցում և դաստիարակություն:
Դպրոցի հիմնանորոգված և վերազինված լինելը անհրաժեշտ նախապայման է դպրոց հաճախող երեխաների և այս խնդիրն մտահոգ ծնողի համար:
Հիմնանորոգման և վերազինման հերթական փուլի ավարտից հետո, դպրոցում ուսանող հաշմանդամություն ունեցող աշակերտներն այլևս շինության երկրորդ հարկ բարձրանալու դժվարություն չեն ունենալու՝ կրթօջախում շահագործման հանձնված նոր վերելակի շնորհիվ: Կրթության հավասար իրավունքի ապահովմանը ծառայող վերելակը կառուցվել է Գավառի հատուկ դպրոցի „Նյու Յորքի բարեկամների խորհրդի,, ֆինանսական աջակցությամբ և Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) մասնակցությամբ: Վերջիններիս շնորհիվ նորոգել է շենքի մուտքը, 2 սանհանգույց, մարզադահլիճը, խոհանոցը՝ տեղադրվել է կահույք, սառնարան և տաք ջրի կաթսա:

Դպրոցն այսօր ունի տարբեր խնդիրներ ունեցող 40 երեխա, ովքեր ներկայացնում են մարզի տարբեր համայնքները:

13. Մարզի 3 քաղաքային համայնքներում՝ Գավառ, Սևան և Ճամբարակ գործում են բարեգործական ճաշարաններ, որտեղ հաճախում են ինչպես անապահով, այնպես էլ հաշմանդամություն ունեցող 261 անձինք, ովքեր չունեն շարժվելու խնդիր, իսկ շարժվելու խնդիր ունեցող հաշմանդամներին կատարվում է սննդի առաքում: Ճաշարանների գործունեությունը իրականացվում է համայնքային բյուջեի և “Առաքելություն Հայաստան “ ՀԿ-ի կողմից:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, ՀՀ Գեղարքունիքի մարզի

հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի

Նախագահ՝



ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ